

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«25» մայիսի 2020թ. թիվ 142 նիստում

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍԱՆՈՂ  
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2020

## **1. Ընդհանուր դրույթներ**

1.1. Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ուսանող մասնակիցների հարցման (այսուհետ՝ ուսանողական հարցման) ընթացակարգը սահմանում է կենտրոնի միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում ուսանողների կողմից ԳԿՄԿ գործընկեր համալսարաններում ուսանած դասընթացների դասավանդման վերաբերյալ գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԳԿՄԿ Կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԳԿՄԿ մագիստրանտների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու իրավունքի դրսևորում:

1.3. Ուսանողական հարցման ընթացակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման և արտաքին կապերի բաժինները:

## **2. Ուսանողական հարցման անցկացումը**

2.1. Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մասնակից ուսանողների հարցումն իրականացվում է ԳԿՄԿ գործընկեր համալսարանի կողմից ուսանողների ակադեմիական գնահատականների ներդիրը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում, սակայն ոչ ավելի ուշ քան հաջորդող կիսամյակի սկիզբը: Հարցումն պարտադիր է լրացման համար միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մասնակից բոլոր ուսանողների համար:

2.2. Ուսանողական հարցումն իրականացվում է ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կողմից տրամադրած տվյալների հիման վրա:

2.3. Ուսանողական հարցումն անց է կացվում առցանց:

### **3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը**

3.1. Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնում:

3.2 Ուսանողական հարցման արդյունքները 5 տարի, իսկ գնահատված հարցաթերթերը 3 տարի պահվում են ԳԿՄԿ էլեկտրոնային բազայում:

### **4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը**

4.1. Ուսանողական հարցման արդյունքները Կրթության որակի ապահովման բաժինը ներկայացնում է համապատասխան ամբիոն և Արտաքին կապերի բաժին:

4.2. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ամբիոնի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի բարելավմանը:

4.3. Ուսանողական հարցման արդյունքներ օգտագործվում են՝

- աջակցելու ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներին և Արտաքին կապերի բաժնին՝ վերլուծելու և վերհանելու ընտրված դասընթացների առավելություններն ու թերությունները և ապագայում կատարել առավել թիրախավորված ընտրություն:
- ներդնելու դասավանդման առաջավոր փորձը և նոր թեմաներ համապատասխան ամբիոնում:

## ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ

### Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մասնակիցների հարցման թերթիկ

Հարգելի՛ ուսանող, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մասնակիցների շրջանում կազմակերպում է հարցում: Հարցման նպատակն է պարզել մասնակիցների գոհունակությունը շարժունության տվյալ ծրագրից, բացահայտել առավելություններն ու թերությունները, ինչը հնարավորություն կտա հնարավորինս բարելավել հետագայում իրականացվող ծրագրերը: Ձեր պատասխանը կարող է օգտակար լինել հատկապես հետագայում նման ծրագրերի մասնակցող այլ ուսանողների համար: Հարցումն անանուն է, տվյալները վերլուծվելու են ընդհանրացված կարգով:

#### **Ընդհանուր տեղեկություն**

- Հյուրընկալող բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը (ԲՈՒՀ)
- Շարժունության ժամանակահատվածը՝ (... /... /... - ... /... /...)
- Ուսումնառության ոլորտ (օր.՝ բնապահպանություն և բնօգտագործում, գործարար վարչարարություն և այլն)
- Կրթական ծրագրի անվանումը հյուրընկալող բարձրագույն ուսումնական հաստատությունում

#### **Կրթական ծրագրի բովանդակությունն ու մատուցման ծառայությունները**

1. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ էր շարժունության կիսամյակի շրջանակներում անցկացրած ուսումնառությունը օգտակար.
  1. Ընդհանրապես օգտակար չէր
  2. Ավելի շուտ օգտակար չէր
  3. Ավելի շուտ օգտակար էր
  4. Շատ օգտակար էր
2. Որքանո՞վ եք գոհ հյուրընկալող հաստատությունում ընտրված դասընթացներից.
  1. Ընդհանրապես գոհ չեմ
  2. Ավելի շուտ գոհ չեմ
  3. Ավելի շուտ գոհ եմ
  4. Լիովին գոհ եմ
3. Նշեք այն դասընթացները կամ 5 թեմաները, որոնք կցանկանայիք, որ դասավանդվեն ԳԿՄԿ-ում.
  1. -----
  2. -----

3. -----
4. -----
5. -----

4. Ինչպե՞ս էր կազմակերպված դասավանդման գործընթացը հյուրընկալող բուհում.
  1. Դասախոսություններ
  2. Դասախոսություններ/գործնական աշխատանքներ/սեմինարներ
  3. Դասախոսություններ/նախագծեր
  4. Դասախոսություններ/առցանց հանձնարարություններ/հիբրիդ  
ուսումնառություն
  5. Դասախոսություններ/անհատական հանձնարարություններ
  
5. Նշեք դասավանդման այն 5 մեթոդները, որոնք կցանկանայիք, որ ներդրեն ԳԿՄԿ-ում.
  1. -----
  2. -----
  3. -----
  4. -----
  5. -----
  
6. Որո՞նք էին շարժունության շրջանի հիմնական մարտահրավերները կրթական ծրագրի տեսանկյունից:
  1. -----
  2. -----
  3. -----
  
7. Ի՞նչ խորհուրդ կտաք մյուս ուսանողներին, ովքեր մտադիր են մասնակցել «Էրազմուս +» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին:
  1. -----
  2. -----
  3. -----

***Համակարգում, ուսանողների տեղավորում և միջմշակութային հաղորդակցություն***

1. Արդյո՞ք կազմակերպվում էր նոր ուսանողների ինտեգրումը:
  1. Այո 2. Ոչ  
Եթե այո՝ ինչպե՞ս:
  
2. Արդյո՞ք կազմակերպում էր շարժունության ուսանողների համակարգում և մենթորություն:

1. Այո 2. Ոչ  
Եթե այո՝ ինչպե՞ս:
3. Ընդունող հաստատությունում ունեցել ե՞ք ուսանողների համար նախատեսված կողմնորոշման հանդիպում:
  1. Այո 2. Ոչ
4. Արդյո՞ք օտար/տեղական լեզվի իմացության կարիքը կար:
  1. Այո 2. Ոչ
- 4.1 Եթե այո, արդյո՞ք առկա էին անհրաժեշտ ռեսուրսները, օրինակ *(ընտրել բոլոր հնարավոր տարբերակները)*
  1. Տեղական լեզվի անվճար դեմ առ դեմ դասընթաց/ներ
  2. Տեղական լեզվի անվճար առցանց դասընթաց/ներ
  3. Այլ /նշե՛լ ռեսուրսը/
5. Որո՞նք էին շարժունության շրջանի հիմնական մարտահրավերները բնակեցման առումով.
  1. -----
  2. -----
  3. -----
6. Որո՞նք էին շարժունության շրջանի հիմնական մարտահրավերները միջմշակութային հաղորդակցության առումով.
  1. -----
  2. -----
  3. -----
7. Ձեր շարժունության կազմակերպման գործում ինչպե՞ս եք գնահատում

7.1 Ամբիոնի միջազգայնացման պատասխանատուի աշխատանքը	1. Շատ վատ	2. Վատ	3. Չեզոք	4. Լավ	5. Շատ լավ
7.2 Արտաքին կապերի բաժնի աշխատանքը	1. Շատ վատ	2. Վատ	3. Չեզոք	4. Լավ	5. Շատ լավ

Առաջարկություններ և մեկնաբանություններ

**Շնորհակալություն հարցմանը մասնակցելու և մեզ աջակցելու համար:**